


75 Քարտեզի վրա ո՞ր ռասայի տարածման շրջաններն են պատկերված Ա տառով:

- 1) մոնղոլոիդ
- 2) եվրոպեոիդ
- 3) ավստրալոիդ
- 4) նեգրոիդ



76 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ. 18° և արմ.երկ. 5°: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը սեպտեմբերի 23-ին:

(77-78) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, գագաթին՝ 520 մմ է: Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է: (Հաշվարկը կատարել 5°-ով):

77 Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

78 Որոշել օդի ջերմաստիճանը Լեռան գագաթին:

(79-80) Երկրի բնակչության թիվը 80 000, բնական աճի գործակիցը՝ 15‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1400, արտագաղթը՝ 600:

79 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

80 Որոշել երկրի բնակչության թիվը մեկ տարի անց:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:


Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ



1) Նկարում պատկերված է Երկրի դիրքը Արեգակի նկատմամբ.

- 1) դեկտեմբերի 22-ին
- 2) հունիսի 22-ին
- 3) սեպտեմբերի 23-ին
- 4) մարտի 21-ին

2) Երկու քաղաքներ գտնվում են նույն միջօրեականի վրա, նրանց միջև հեռավորությունը 50° է: Նրանց միջև իրական հռավորությունը կլինի.

- 1) 5550 կմ
- 2) 4440 կմ
- 3) 6660 կմ
- 4) 3330 կմ

3) Հասարակածի երկարությունը կազմում է.

- 1) 40076 կմ
- 2) 20067 կմ
- 3) 12000 կմ
- 4) 30076 կմ

4) Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Լոնդոն քաղաքը գտնվում է Երրորդ ժամային գոտում:
- 2) Երկրի միջին շառավիղը հավասար է 6371 կմ:
- 3) Հյուսիսային և հարավային բևեռներն իրար միացնող երևակայական գիծը կոչվում է հասարակած:
- 4) Երկիրը Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:

5) Երկրակեղևի և միջնապատյանի վերին կարծր շերտը միասին կոչվում է.

- 1) պլատֆորմ
- 2) միջուկ
- 3) քարոլորտ
- 4) գեոսինկլինալ

6) Մթնոլորտի երկրամերձ շերտում ջրային մանրագույն կաթիլների կուտակումը կոչվում է.

- 1) ցող
- 2) եղյամ
- 3) մառախուղ
- 4) անպ


7) Այն սահմանային գիծը, որը իրարից է բաժանում հարևան գետերի ջրավազ ավազաններն, կոչվում է.

- 1) ջրբաժան գիծ
- 2) գետահովիտ
- 3) գետի թեքություն
- 4) գետի անկում

74

Կլիմայական քարտեզի վրա 4Ա, 4Բ, 4Գ թվերով պատկերված կլիմայական գոտին է.

- 1) մերձհասարակածային
- 2) արևադարձային
- 3) մերձարևադարձային
- 4) բարեխառն



- 69) Ինչն ընդհանուր է Տավուշի և Սյունիքի մարզերի համար.
- 1) Ջարգացած է լեռնահանքային արդյունաբերությունը
 - 2) Ջարգացած է ծխախոտագործությունը
 - 3) Ուրբանիզացման մակարդակը բարձր է հանրապետության միջին ցուցանիշից
 - 4) Սահմանակից են Ադրբեջանին

70) Ազգային պարկեր ունեցող մարզերն են.

- 1) Արագածոտնը և Արարատը
- 2) Գեղարքունիքը և Տավուշը
- 3) Կոտայքը և Արմավիրը
- 4) Շիրակը և Վայոց ձորը

71) Այլընտրանքային էներգառեսուրսների օգտագործմամբ հայտնի երկիր է.

- 1) Չինաստանը
- 2) Իսլանդիան
- 3) Գերմանիան
- 4) Ուկրաինան

72) Սնոգն առավել բնորոշ է.

- 1) Լոնդոնին
- 2) Վաշինգտոնին
- 3) Ժնևին
- 4) Վենետիկին

73) Բնական միջավայրի մոնիթորինգ է.


- 1) Ցամաքի տարածքի որևէ տեղամասում միջավայրի առանձին տարրերի պահպանությունը:
- 2) Բնական ռեսուրսների տնտեսական գնահատումը:
- 3) Շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտումը:
- 4) Բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումը, գնահատումը և վերահսկումը:

8) Գետի անկումը 2400 մ է, երկարությունը՝ 800 կմ: Գետի միջին թեքությունը կլինի.

- 1) 4 մ/կմ
- 2) 3 մ/կմ
- 3) 8 մ/կմ
- 4) 2 մ/կմ


9) Ո՞ր տառով է նշված խառնարանը.

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա



10) Նկարում պատկերվածը ո՞ր կլիմայական գոտուն է բնորոշ.

- 1) արկտիկական
- 2) հասարակածային
- 3) մերձարևադարձային
- 4) բարեխառն



11) Անտարկտիդայի ափերը ողողող ծովերն են.

- 1) Սպիտակ և Զյուսիսային
- 2) Կարայի և Բաֆինի
- 3) Բարենցի և Նորվեգական
- 4) Ամունդսենի և Ռոսսի

12) Տափաստանների զոնային բնորոշ բուսատեսակներ են.

- 1) կեչին և բոխին
- 2) կակտուսը և օշինդրը
- 3) փետրախոտը և սիզախոտը
- 4) եղևին և սոճին

13) Լեռնաշղթան ունի հյուսիս-հարավ ձգվածություն, եզերում է մայրցամաքը արևմուտքից: Թարգմանաբար նշանակում է «Պղնձե լեռներ»: Այդ լեռնաշղթան է.

- 1) Զինալայները
- 2) Անդերը
- 3) Ուրալյանը
- 4) Ալպերը

14 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Հարավային Ամերիկյան Անտարկտիդայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
- 2) Աֆրիկայում մնացորդային ծագում ունեն Նյասա և Տանգանիկա լճերը:
- 3) Ժամանակավոր հոսք ունեցող գետերը Ավստրալիայում կոչվում են քրիկներ:
- 4) Եվրասիայի ամենաբարձր լեռը Մոնթբլանն է:

15 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Աֆրիկայի կլիմայի ձևավորման վրա մեծ է մուսսոնների ազդեցությունը:
- 2) Ավստրալիան ամենախոնավ մայրցամաքն է:
- 3) Ըստ բարձրության մթնոլորտային ճնշումը նվազում է:
- 4) Մշտապես արևադարձերից հասարակած փչող քամիները կոչվում են բրիզներ:

16 **«Լիճ-մայրցամաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Չադ - Աֆրիկա
- 2) Տիտիկակա - Ավստրալիա
- 3) Բայկալ – Հյուսիսային Ամերիկա
- 4) Էյր - Եվրասիա

17 **«Ծոց-օվկիանոս» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Գվինեական - Խաղաղ
- 2) Մեքսիկական – Ատլանտյան
- 3) Բիսկայան – Հնդկական
- 4) Բենգալական – Հյուսիսային Սառուցյալ

18 **Միջագետքի դաշտավայրով հոսող գետեր են.**

- 1) Ամուդարյան և Սիրդարյան
- 2) Ինդոսն ու Գանգեսը
- 3) Լենան և Օբը
- 4) Տիգրիսը և Եփրատը

63 **Ընտրել միակ սխալ պատասխանը Մեծ Բրիտանիայի համար.**

- 1) Առևտրական նավատորմն իր ջրատարողությամբ աշխարհում առաջատարներից է:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է :
- 3) Բարձր է ուրբանիզացման մակարդակը:
- 4) Արդյունաբերության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է:

64 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Արագածը և Նեմրուքը գործող հրաբուխներ են:
- 2) Ցայտուն արտահայտված է երիտասարդ հրաբխականությունը:
- 3) Հայկական լեռնաշխարհը միջին բարձրությամբ զիջում է Իրանական և Փոքրասիական բարձրավանդակներին:
- 4) Հայկական լեռնաշխարհը հարավից եզերում է Փոքր Կովկասը:

65 **« Լանդշաֆտային գոտի – հողային տիպ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) անապատակիսանապատային - կարմրահողեր
- 2) մերձալպյան և ալպյան - դարչնագույն հողեր
- 3) լեռնաանտառային - կուլտուր-ռոտզելի հողեր
- 4) լեռնատափաստանային - լեռնային սևահողեր

66 **Ընտրել մարզերի և քաղաքների անվանումների տրված համապատասխանության ճիշտ շարքը.**

- | | |
|----------------|-------------|
| 1. Լոռի | ա. Սիսիան |
| 2. Սյունիք | բ. Մարտունի |
| 3. Գեղարքունիք | գ. Ալավերդի |
| 4. Տավուշ | դ. Դիլիջան |

- 1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 2) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
- 3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ

67 **Հայաստանի թեթև արդյունաբերության զարգացմանը նպաստել է.**

- 1) հողային ռեսուրսների առկայությունը
- 2) ջրային ռեսուրսների առկայությունը
- 3) սննդի արդյունաբերության զարգացումը
- 4) աշխատանքային ռեսուրսների առկայությունը

68 **Ընտրել ՀՀ գետերի ճիշտ շարքը՝ ըստ նրանց երկարությունների նվազման.**

- 1) Ազատ, Ախուրյան, Քասախ, Հրազդան
- 2) Ախուրյան, Քասախ, Հրազդան, Ազատ
- 3) Ախուրյան, Հրազդան, Քասախ, Ազատ
- 4) Հրազդան, Ախուրյան, Ազատ, Քասախ

57 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Տեղատվությունը օվկիանոսի ջրի մակարդակի բարձրացման երևույթն է:
- 2) Ջրակայուն առաջին շերտի վրա տեղադրված ստորերկրյա ջրերը կոչվում են արտեզյան:
- 3) Օվկիանոսների հատակի մինչև 200 մ խորությունները կոչվում են մայրցամաքային ծանծաղուտ:
- 4) Շարժման սեփական միջոցներ ունեցող ջրային կենդանիները կոչվում են պլանկտոն:

58 Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Ներքնուրրտում ըստ բարձրության օդի ջերմաստիճանը բարձրանում է:
- 2) Սթնուրրտային նորմալ ճնշումը հավասար է սնդիկի սյան 670 մմ:
- 3) Ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը մեծ է հասարակածային շրջաններում:
- 4) Ցիկլոնը մթնուրրտային ցածր ճնշման մարզ է:

59 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Ծանր գունավոր մետաղների ձուլման ձեռնարկությունները տեղաբաշխվում են հունքային բազաների մոտ:
- 2) Մեքենաշինության մետաղատար ճյուղերը տեղաբաշխվում են գիտական կենտրոնների մոտ:
- 3) Արդյունաբերության բնորոշ է գծային տեղաբաշխումը:
- 4) Մեքենաշինության գիտատար ճյուղերը տեղաբաշխվում են մետալուրգիական բազաների մոտ:

60 Մեռատարիքային բուրգը բնորոշ է.

- 1) Նիգերիային
- 2) Ճապոնիային
- 3) Ռուսաստանին
- 4) Մեծ Բրիտանիային



61 Այդ պետությունը պետական կառավարման ձևով խորհրդարանական հանրապետություն է: Քրոմի պաշարներով աշխարհի առաջատար երկրներից է: Մայրաքաղաքը բնակչության թվով երկրորդ քաղաքն է: Այդ պետությունն է.

- 1) Թուրքիան
- 2) Գերմանիան
- 3) Իտալիան
- 4) Ֆրանսիան

62 Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Հինդուիզմը և բուդդիզմը ազգային կրոններ են:
- 2) Ջարգացող երկրներում բարձր է ուրբանիզացման աճի տեմպերը:
- 3) Մեգալոպոլիսները և ագլոմերացիաները բնակավայրերի պարզ ձևեր են:
- 4) Ավստրալիան և Ռուսաստանը խտաբնակ երկրներ են:

19 Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Նեղոս գետը.

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա

20 Քարտեզի վրա Ալժիր պետությունը ո՞ր տառով է նշված.

- 1) Չ
- 2) Է
- 3) Ը
- 4) Ե




- 21 Բնակչության թվի կտրուկ աճը՝ ծնելիության բարձր մակարդակի պահպանման և մահացության էական կրճատման հետևանքով կոչվում է.
- 1) բնակչության վերարտադրություն
 - 2) ժողովրդագրական պայթյուն
 - 3) ժողովրդագրական ճգնաժամ
 - 4) ժողովրդագրական քաղաքականություն
- 22 Ընհանուր ծագմամբ, ժառանգաբար փոխանցվող արտաքին ֆիզիկական և մարդաբանական հատկանիշներով իրար նման մարդկանց պատմականորեն ձևավորված խումբը կոչվում է.
- 1) աշխատանքային ռեսուրսներ
 - 2) էթնոս
 - 3) ազգ
 - 4) ռասա
- 23 Դա արդյունաբերության ճյուղերից է, աշխատատար է և գիտատար, որի պատճառով տեղաբաշխված է խոշոր քաղաքներում: Այդ ճյուղն է .
- 1) սննդի արդյունաբերություն
 - 2) մեքենաշինություն
 - 3) մետաղաձուլություն
 - 4) վառելիքային արդյունաբերություն
- 24 Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 120000կմ է, երկրի մակերեսը՝ 80000կմ²: Տրանսպորտային ցանցի խտությունը կլինի.
- 1) 4 կմ/կմ²
 - 2) 0.5 կմ/կմ²
 - 3) 2.5 կմ/կմ²
 - 4) 1.5կմ/կմ²
- 25 «Ժողովուրդ-կրոն» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.
- 1) հրեաներ- հուդայականություն
 - 2) արաբներ - մահմեդականություն
 - 3) թուրքեր- բուդդայականություն
 - 4) ֆրանսիացիներ-քրիստոնեություն
- 26 «Պետություն – կառավարման ձև» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.
- 1) Իտալիա - միապետություն
 - 2) Ֆրանսիա - հանրապետություն
 - 3) Հնդկաստան – միապետություն
 - 4) Սաուդյան Արաբիա - հանրապետություն
- 27 «Պետություն - բուսաբուծության մասնագիտացման ճյուղ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.
- 1) Մեծ Բրիտանիա - բամբակենի
 - 2) ԱՄՆ - եգիպտացորեն
 - 3) Չինաստան – բրինձ
 - 4) Բրազիլիա - սուրճ

- 51 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Արեգակի ամենաբարձր դիրքը հորիզոնի նկատմամբ Երևանում լինում է հունիսի 22-ին:
 - 2) Տվյալ պահին միևնույն միջօրեականի բոլոր կետերում գրանցված ժամանակը կոչվում է գոտիական:
 - 3) Տարվա ընթացքում հասարակածի վրա կեսօրին Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ միշտ 90⁰ է:
 - 4) Հայաստանի Հանրապետությունը գտնվում է հինգերորդ ժամային գոտում:
- 52 Որքա՞ն է հյուսիս-արևելյան կողմի ազիմուտը.
- 1) 90⁰
 - 2) 45⁰
 - 3) 225⁰
 - 4) 135⁰
- 53 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Ցունամիները առաջանում են մշտական քամիների ներգործությամբ:
 - 2) Ստորերկրյա ջրերի բնական ելքը երկրի մակերևույթ կոչվում է աղբյուր:
 - 3) Օվկիանոսի ջրի միջին աղիությունը կազմում է 33 ‰:
 - 4) Երկրի մակերևույթով իր առաջացրած հունով ջրի մշտական հոսքը կոչվում է գետահովիտ:
- 54 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ զուգորդությունը.
- 1) ծովային կլիմա - 700-800մմ - տափաստան
 - 2) մուսոնային կլիմա - 200-300մմ - անտառ
 - 3) խիստ ցամաքային կլիմա - 100-200մմ - անապատ
 - 4) միջերկրածովային կլիմա - 500-600մմ - սավանա
- 55 Կղզին կղզիախմբում առաջինն է իր մեծությամբ, այստեղ է գտնվում երկրի մայրաքաղաքը և աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկը: Այդ կղզին է.
- 1) Հոնոլուլու
 - 2) Հոկայդոն
 - 3) Ճավան
 - 4) Կալիմանտան
- 56 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Հարավային Ամերիկայի մեծ մասը մտել է Լավրասիայի կազմի մեջ:
 - 2) Կովկասյան և Ուրալյան լեռներն ընկած են Ալպ-Հիմալայան գետսինկլինալի տարածքում:
 - 3) Ալպերը ձևավորվել է Խաղաղօվկիանոսյան գետսինկլինալի տարածքում:
 - 4) Եվրասիայի որոշ տեղամասեր մտել են Գոնդվանայի կազմի մեջ:

49 Քարտեզի վրա Բազումի լեռնաշղթան ո՞ր տառով է նշված.

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա



50 Քարտեզի վրա Կապան քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Զ
- 2) Է
- 3) Ը
- 4) Ե

28 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Նավթի գլխավոր արտահանող երկիրը Չինաստանն է:
- 2) Քիմիական արդյունաբերությանը յուրահատուկ է ցրված տեղաբաշխումը:
- 3) Թեթև գունավոր մետաղների արտադրությունը էներգատար է:
- 4) Աշխարհի մեքենաշինական արտադրանքի կեսը թողարկում են զարգացող երկրները:

29 Բնակչության բարձր բնական աճը բնորոշ է.

- 1) Մեծ Բրիտանիային և Գերմանիային
- 2) Ռեկրահիային և Թուրքիային
- 3) Ռուսաստանին և Ֆրանսիային
- 4) Իրանին և Նիգերիային

30 Դեպի ծով ելք չունեցող պետություններ են.

- 1) Շվեյցարիան և Չեխիան
- 2) Ճապոնիան և Մոնղոլիան
- 3) Չիլին և Արգենտինան
- 4) Ալժիրը և Սուդանը

31 «Պետություն-նավահանգիստ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ավստրալիա - Տոկիո
- 2) Հնդկաստան – Ռիզա
- 3) Բրազիլիա –Ռոտերդամ
- 4) Ֆրանսիա – Մարսել

32 Չինաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արդյունաբերության գլխավոր կենտրոնները գտնվում են արևմտյան մասում:
- 2) Տարածքի մեծությամբ աշխարհում առաջինն է:
- 3) Ունի ուրբանիզացման բարձր մակարդակ:
- 4) Ածխի և պողպատի արտադրությամբ աշխարհում առաջինն է:

33 100 մլն – ից ավել բնակչություն ունեցող երկրներ են.

- 1) Ճապոնիան և Ինդոնեզիան
- 2) Եգիպտոսը և Գերմանիան
- 3) Բրազիլիան և Արգենտինան
- 4) Կանադան և Մեքսիկան

34 Սուրճի մշակությամբ առաջատար երկրներ են.

- 1) Հնդկաստանը և Իրանը
- 2) Կանադան և Թուրքիան
- 3) Կոլումբիան և Բրազիլիան
- 4) Ֆրանսիան և Հունաստանը

35 Զայկական լեռնաշխարհի եզրային ծալքաբեկորավոր լեռնաշղթա չէ.

- 1) Փոքր Կովկասը
- 2) Արևելյան Պոնտոսը
- 3) Արևելյան Տավրոսը
- 4) Զայկական Պարը

36 Տրված «լեռնագագաթ - բարձրություն» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Սիփան - 5165 մ
- 2) Աժդահակ – 3597մ
- 3) Նենրուֆ– 2250մ
- 4) Արագած - 4400մ

37 ԶԶ-ում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը (- 46° C) նկատվել է.

- 1) Արագած լեռնագանգվածում
- 2) Ապարանի դաշտում
- 3) Աշոցքի սարահարթում
- 4) Սևանի ավազանում

38 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արաքսի ավազանին պատկանող գետերն ունեն սառցադաշտային սնուն:
- 2) ԶԶ քաղցրահամ ջրի մեծ մասը կուտակված է Սևանա լճում:
- 3) ԶԶ-ում ամենաշատ տեղումները թափվում են Արարատյան դաշտում:
- 4) ԶԶ տարածքի մոտ 82% - ը կազմում են հարթավայրերը:

39 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ԶԶ բնակչության կեսից ավելին բնակվում են մինչև 1000մ բարձրություններում:
- 2) ԶԶ բնակչության սեռային կազմում գերակշռում են կանայք:
- 3) ԶԶ-ն ազգային կազմով միատարր երկիր է:
- 4) ԶԶ-ն բնակչության թվով գերազանցում է Ադրբեջանին և Թուրքիային:

40 Ոսկու հանքավայրեր են.

- 1) Շամլուղը և Կապանը
- 2) Ագարակը և Սվարանցը
- 3) Արթիկը և Քաջարանը
- 4) Սոթքը և Մեղրաձորը

41 ԶԶ ամենախոշոր ջրամբարն է.

- 1) Ապարանի
- 2) Սպանդարյանի
- 3) Կեչուտի
- 4) Ախուրյանի

42 ԶԶ խաղողագործության զարգացման հիմնական շրջանն է.

- 1) Սևանի ավազանը
- 2) Արարատյան դաշտը
- 3) Լոռվա դաշտը
- 4) Շիրակի դաշտը

43 ԶԶ ամենահզոր էլեկտրակայանն է.

- 1) Երևանի ջերմաէլեկտրակայանը
- 2) Զրազդանի ջերմաէլեկտրակայանը
- 3) Տաթևի ջրաէլեկտրակայանը
- 4) Վանաձորի ջերմաէլեկտրակայանը

44 Սպառվող վերականգնվող ռեսուրսներ են.

- 1) տուֆը և բազալտը
- 2) բույսերը և կենդանիները
- 3) նավթը և քարածուխը
- 4) երկաթը և մանգանը

45 Զողային ռեսուրսներով հարուստ երկիր է

- 1) Եգիպտոսը
- 2) Ճապոնիան
- 3) Զայաստանը
- 4) Կանադան

46 Զրերի մաքրման եղանակ չէ.

- 1) երկրաբանական
- 2) մեխանիկական
- 3) կենսաբանական
- 4) ֆիզիկաքիմիական

47 Մթնոլորտը առավելապես աղտոտվում է.

- 1) սանիտարական անտառահատումներից
- 2) ջրային էլեկտրակայաններից
- 3) ջերմային էլեկտրակայաններից
- 4) ջերմաստիճանային շրջադասություններից

48 Քարոլորտի վերին շերտի, մթնոլորտի ստորին շերտի, ամբողջ ջրոլորտի, կենսոլորտի և մարդոլորտի միասնությունը կոչվում է

- 1) մայրցամաք
- 2) աշխարհագրական թաղանթ
- 3) աշխարհագրական գոտի
- 4) բնական զոնա